ԿՈՄԻՏԱՍԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ՑԵՐԵԿՈՒՅԹԸ ՍՈՐԲՈՆԻ ՄԵՋ

Կիրակի, փետրվարի 26-ին, Սորբոնի մեծ ամփիթատրոնի մեջ տեղի ունեցավ Ֆրանսահայ Մշակութային Միության ցերեկույթը, նվիրված հայ մեծ երաժշտագետ Կոմիտաս Վարդապետի ծննդյան 80-ամյա տարեդարձին։

Հայ ժողովրդական երգի այս մեծ վարպետի ծննդյան 80-ամյակը տոնելու գեղեցիկ գաղափարը Հայաստանի մեջ սկսավ, և գովելի է Փարիզի հայ գաղութը, որ շուշացավ իր բաժին հարգանքը բերելու մեծ Կոմիտասի հիշատակին, մանավանդ որ անոր կյանքը, ինչպես իր լավ, նույնպես և իր վատ օրերուն, շատ հիշատակներով կապված է այս քաղաքին հետ։

Բանախոսություններով և հուշերով, հանդես եկող ազգայիններ հետաքրքիր դրվագներ պատմեցին մեծ երաժշտագետի կյանքեն և պատշաճ ձևով արժեքավորեցին անոր դերը հայ երաժշտության պատմության մեջ։

Գեղարվեստական բաժնեն վերջ, խոսք առավ Արտավազդ Սրբազան և դրվատեց մեծ Կոմիտասի անմահ երաժշտությունը, նշելով որ՝ «Կոմիտասի երգած արորի և մաճկալի դերը կկատարեն այսօր Հայաստանի մեջ տրակտորը և անոր մեքենավարը, որոնք կերգեն թե՛ Կոմիտասի երգերը և թե՛ Հայրենիքի նոր ստեղծագործներուն հորինած երգերը»։

(Քաղված Փարիզի «Ազատ խոսք» թերթի 1950 թվի մարտի 1-ի համարից)։

ԴՈԿՏՈՐ ԱՍԱՏՈՒՐ ԱԼԹՈՒՆՅԱՆԻ ՄԱՀԸ

96 տարեկան հասակին, 1950 հունվար 4-ին, Հալեպի մեջ ի Տեր հանգչավ միշազգային համբավի տեր «վիրաբույժ հսկան»՝ դոկտ. Ասատուր Ալթունյան։

Համանուն հիվանդանոցին հիմնադիր դոկտ. Ալթունյան ծանոթ էր Մերձավոր Արևելքի բոլոր ժողովուրդներուն։

Հանգուցյալ բժիշկը կատարած էր ավելի քան 20,000 գործողություն, փրկելով կյանքը հազարավոր անհույս հիվանդներու։

«Ալթունյան հիվանդանոց և Հալեպ»՝ տարիներե ի վեր կարծես հոմանիշ դարձած են։

Հալեպի Ազիզիե փարթամ թաղին մեկ մասը գրավված է Ալթունյան հաստատություններով — հիվանդանոց, դեղարան, բնակարան, մոտը ժողովարան, որուն շինության բերած էր իր կարևոր մասնակցությունը։

Հալեպի բարեխնամ կառավարությունը ի պատիվ իրեն, Ազիզիե թաղին մեկ պողոտային անունը դրած է «Ալթունյան պողոտա»։

Հանգուցյալ դոկտ. Ալթունյան իր կապը կտրած չէր հայությենեն, կամանակցեր հանդիսությանց, բարեսիրական ձեռնարկներու, հայկական հավաքույթներու, կբանախոսեր հայերեն։ Սյուրիո և Լիբանանի հայության անունով մասնակցած էր Փարիզի Ազգային Պատվիրակությանց...

Հողը թեթև գա քու թարմ շիրմիդ վրա, հայ անվանի բժիշկ։

Մաշթոց քահանա Ոսկերիչյան

(«Լրաբեր», 23 փետրվարի 1950 թ.)

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Խաղաղ կյանքը բնածին բաղձանք մը եղած է մարդ էակին համար բոլոր ժամանակներու ընթացքին։ Այդ բաղձալի, խաղաղ և բնականոն կյանքի խանգարումը, անհատական կամ զանգվածային բախումներով, ծնունդ տուած և գործադրված է անհատի կամ անհատներու ընչաքաղց «կարիքներուն» համապատասխան։ Հարձակման ենթակա կողմերը իրենց կարգին, ինքնապաշտպանության դիմադրական կռիվ մղած են, պանոնք ևս, իրենց կարիքներուն համար, սակայն արդարության, իրավունքի և բարոյական ըմբռնումներու սկզբունք-կանոններուն վրա հենված։

Բոլոր ժամանակներու պատերազմները, մարդկային պատմության զարգացման զուգընթաց, զարգացած ընչաքաղց հոգեբանության տեր բազմերանգ դասակարգերու շահադետ ձեռնարկները եղած են։ Քսաներորդդարու երկու համաշխարհային պատերազմ-